Արձանագրություն N 3

ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ 31/15 ծածկագրով «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար հաշվապահական հաշվառման վարման (աութսորսինգային) ծառայությունների ձեռքբերման նպատակով ստեղծված գնահատող հանձնաժողովի

ք. Երևան 29 դեկտեմբերի 2015թ. ժ. 10:00

Մասնակցում էին՝

| | | |
|---|---|---|
| Ա. Պետրոսյանը | - | Գլխավոր տնօրենի տեղակալ(նախագահ) |
| Ռ. Կիրակոսյանը | - | Գլխավոր տնօրենի տեղակա |
| Շ. Գրիգորյանը | - | ՆԻՎ-ի գլխավոր մասնագետ |
| Ա. Պետրոսյանը | - | ՊԲ-ի առաջատար մասնագետ (քարտուղար) |

Նիստին ներկա էին «Ասատրյանս» ՍՊԸ-ի լիազորված անձ Ալբերտ Ասատրյանը, «Նեցուկ ԱՍ» ՍՊԸ-ի լիազորված անձ Սամվել Եղիազարյանը, «Գլոբալ Կոնսալտ» ՍՊԸ-ի տնօրեն Տ. Հարությունյանը :

Նիստի օրակարգը

1.ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ 31/15 ծածկագրով ներկայացրած հայտերի մասին:

2. Հրավեր ներկայացրած մասնակիցների գրաված տեղերի և մասնակիցներից համաձայն հրավերի պահանջվող փաստաթղթերի մասին:

3. «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար հաշվապահական հաշվառման վարման (աութսորսինգային) ծառայությունների ձեռքբերման նպատակով ստեղծված գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի մասին:

Հարց 1.ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ 31/15 ծածկագրով ներկայացրած հայտերի մասին՝

1.1. Հայտ են ներկայացրել հինգ կազմակերպություն՝

- «Դի Ջի Քոնսալթինգ» ՍՊԸ – (հասցեն՝ ք. Երևան, Չայկովսկու 34/21),
- «Գլոբալ Կոնսալտ» ՍՊԸ- (հասցեն՝ ք. Երևան, Աղոնցի 10),
- «Նեցուկ - ԱՍ» ՍՊԸ - (հասցեն՝ ք. Երևան, Ռուբենյանց 23շ, բն 18),
- «Ասատրյանս» ՍՊԸ -ն - (հասցեն՝ ք. Երևան, Բուլվար-Պլազա Բիզնես Կենտրոն, Արամի 64, 2-րդ հարկ)
- «էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ (հասցեն՝ ք. Երևան, Նուբարաշեն 10-րդ փողոց, տուն 6),

1.2 «Դի Ջի Քոնսալթինգ» ՍՊԸ -ն հայտը ներկայացրել է փակ ծրարի մեջ, ծրարի վրա, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի, գրված է Պատվիրատուի անվանումը, հայտերի ներկայացման հասցեն, ընթացակարգի ծածկագիրը, «Չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը, հայտը ներկայացնողի անվանումը, հասցեն, հեռախոսը: